աւանդման կտակ արար հեծեծանօք սրտին, լալով ա-
չացն, ակնարկելով բարեկամացն հուպ նստելոց. Ո՛վ
բարեկամք իմ, ասէ, ողորմեցարո՛ւք ինձ, ողորմե-
ցարո՛ւք, զի ձեռն Տեառն մխեցաւ յիս։ Եւ այսու
զհեծութիւն սրտին ընդ ձայնին հիւսէր և ասէր. Ո՛վ
փառաւոր որդեակք իմ, զիա՞րդ ոչ եղէ արժանի ա-
ռաքել զԱստուածաշունչ յիշատակն իմ առ Հոգևոր-
տէրն և կարօտ մնացի յաւրհնութենէն։ Ո՛վ ցանկալի
որդեակք իմ, զիա՞րդ ի ցանկալոյն Սուրբ Ցակոբայ
զրկեցաւ աղգ Հայոց և ոչ մեռայ լսելով խլացեալ ա-
կանջ իմ զլուրն բօթալից։ Ո՛վ ըղձալիք իմ, զիա՞րդ
մեկնեցայ յըղձալոյն յեղիազարէ, եւ չկայ մերձ զի
մխիթարեսցէ, եւ զիա՞րդ ոչ աղիողորմ արձակեմ
ողբս մնալն նորա անպատեհ տեղիսն և թափառական
շրջիլն. քակտաւ հոգիս մեծ ցաւոյ դիպիլն նորա եւ
է մարմինս ցաւալից, աչս արտասուալից։ Ո՛վ սիրե-
լիք իմ, զգացուցէ՛ք ինձ, ո՞ւր է սիրելին իմ Մար-
տիրոս հռետորն՝ եղբայրն եղիազարու։ Թէպէտև ի
նմանէ զրկեցայ, փոխանակ եղբօրն զկարգս իմ նա
կատարեսցէ կանգնեալ ի վերայ գլխոյ իմոյ եւ յան-
ձինս մեղսալից։ Ո՛վ յոգնատենչդ իմ Տէր Մարտիրոս,
կատարեա՛յ զամենայն կտակս իմ այսպէս. նախ առ
դիրս վարդապետացն արա՛յ զշիրիմս իմ, նաեւ զգիր
յիշատակացն ի վերայ իմ, զի ընթերցեալ այնու յի-
շեսցին զհոգս հոգացեալ, գոնէ ըստ բանին ողորմու-
թեան՝ գտցէ ողորմութիւն յաւուրն աներեկի յողոր-
մածէն անձն իմ ցաւօք մեղաց ախտալից։ Ո՛վ հո-
գիածին որդեակք իմ, թէպէտ և ոչ ըստ մարմնոյ ըս-
տացայ, գոհութիւն մեծ կամեցողին զայս, տնկեսջի՛ք
ի վերայ գլխոյ իմոյ զծառ աճարի(*) ըստ սարասի ի-
մոյ բաստի, թէպէտեւ անպտուղ նմանի, յինքեան

(*) Լուս. ostur գրէ. օշլամուր։